

ուուցաւ, եւ օրրատօրէ զարդարեն զնոյն համախոհք նորին, այսպէս հիմն եզ եւտիքէս խրատիչն դէսսփորոսի, եւ բարձրացոյց, կառոյց, զարդարեաց նոյն դէսսփորոսն. եւ մինչեւ ցայսօր զնոյն տեսանեմք, որ բոլոր ազգս հայոց թողեալ զուղիղ ճանապարհն ուղղափառաց՝ մոլորեցան զհետ երթեալ ճանապարհին եւտիքեայ եւ գրեն հակառակք ուղղափառաց՝ հաստատելով զաղանդն եւտիքեայ, ուրանան զմարդկային բնութիւնն Քրիստոսի, եւ դաւանին ի Քրիստոս մի բնութիւն, այս է, միայն աստուածային բնութիւն. եւ զնոյն ասեն չարչարեալ. ոչ եթէ առաջինքն հայրապետաց եւ վարդապետացն մերոց. այլ վերջին պղտորեալ ժամանակիս երեւեալ վարդապետքս. աւանդ միամիտ ազգիս հայոց, որ ահագին մոլորութեամբ մոլորեալ են ի շար աղանդն եւտիքեայ:»

Անդ էջ 173 «...եւ երեք պատրիարքունքն հայոց, որք եղեն ի Կ.Պօլիս զկնի միմեանց, տէր յոհաննէս կոչեցեալ Խուլ վարդապետ, եւ տէր զաքարիա վարդապետ, եւ տէր կիրակոս վարդապետ, դաւանելով զուղղափառ հաւատս, եւ ցուցանելով զհնազանդութիւն առ նոյն սուրբ քահանայապետն ուրբանոս. ածին զինքեանս առ գրական կաթուղիկէ եկեղեցւոյն: յորոց յոհաննէս Խուլ կոչեցեալն շարագրեաց ոճիւ եւ կարգաւ զգիրք մի ընդդէմ միաբնակաց. եւ ստուգեաց վկայութեամբ հարցն սրբոց զերկու բնութիւնս գոլ ի մի անձն Քրիստոսի. եւ զայլ բանսն ուղիղ հաւատոյ:»

Անդ էջ 241 «...մանաւանդ արհիեպիսկոպոսն Կ.Պօլսի տէր յոհաննէս Խուլ վարդապետ կոչեցեալ, որ յանդիմանելով ի գիրսն իւր զաղանդն հակառակորդացն՝ ասէ այսպէս: Գրեն հայր ոմանք հակառակ ուղղափառաց՝ հաստատելով զաղանդն եւտիքեայ: ուրանան զմարդկային բնութիւն քրիստոսի, եւ դաւանին ի Քրիստոս մի բնու-